31. Դրոշների տեղադրում ծրագրով նախատեսվել է 45,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը, պարբերաբար փոխարինումը, սպասարկումը և նախատեսվել է 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

32. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով նախատեսվել է 23,591.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով, ինչը ծրագրավորվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1

հավելվածի 16-րդ կետը և նախատեսվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների համար, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանության համար:

33. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով նախատեսվել է 172,613.4 հազ. դրամ՝ քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին սուբսիդավորելու համար և ծրագրվել է 2017 թվականի հաստատված ցուցանիշից 37,956.6 հազ. դրամով ավելի, ինչը հիմնականում պայմանավորված է ընկերությունում տեղեկատվական տեխնոլոգիայի որակյալ մասնագետների աշխատանքի խթանման և տվյալ մասնագետների դեպի այլ կազմակերպություններ հոսունությունը հնարավորինս չեզոքացնելու խնդրով:

34. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով նախատեսվել է 220,000.0 հազ. դրամ, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով:

35. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով նախատեսվել են մուտքեր 4,000,000.0 հազ. դրամ, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 600,000.0 հազ. դրամի չափով, որից 400,000.0 հազ. դրամը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշմամբ նախատեսված ինքնական կառույցների օրինականացման գործընթացում կառույցների օտարումից և 200,000.0 հազ. դրամը՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված և շահագործման համար ոչ պիտանի կաթսայատների և այլ գույքի օտարումից,

բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են 3,400,000.0 հազ. դրամի չափով, որից 2,800,000.0 հազ. դրամը՝ հողերի աճուրդով և ուղղակի վաճառքով օտարումներից, իսկ 600,000.0 հազ. դրամը՝ օրինականացված ինքնական կառույցների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողերի օտարումից: Հաշվարկներն իրականացվել են հիմք ընդունելով գույքագրման արդյունքները, ընթացիկ տարվա օտարման միտումները և գործընթացի ողջամիտ ակտիվացման հնարավորությունները:

36. Տոնական ձևավորում ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ տոնական օրերին Երևան քաղաքը պատշաճ ձևավորելու, այդ թվում՝ տոնական լույսեր և սարքավորումներ ձեռք բերելու, ինչպես նաև Էրեբունի-Երևանի 2800 ամյակին նվիրված ինստալացիոն աշխատանքների իրականացման համար և ծրագրվել է 2017 թվականի հաստատված ցուցանիշից 10,000.0 հազ. դրամով ավելի:

37. Հասցեավորման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 105,010.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N 224-Ն որոշման համաձայն հասցեավորման ծառայություններ ձեռք բերելու նպատակով և հաշվարկվել է 2017 թվականի կանխատեսվող կատարողականից ելնելով:

38. Ներդրումային ծրագրերի իրականացում ծրագրով նախատեսվում է 128,200.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեից 10,000.0 հազ. դրամով ավելի, որից 8,200.0 հազ. դրամը նախատեսվում է ներդրումային ծրագրերի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, բուկլետների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքույկների տպագրության համար, որը նպատակ ունի իրազեկելու հնարավոր ներդրողներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին մայրաքաղաքում հնարավոր ներդրումներ իրականացնելու համար, իսկ 120,000.0 հազ. դրամը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:

39. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 347,366.9 հազ. դրամ, որից 17,010.0 հազ. դրամը՝ աղբահանության վճարների կանխիկ գանձման անդորրագրերի տպագրության համար, 228,508.3 հազ. դրամը՝ աղբահանության վճարների գանձումը օպերատորների միջոցով իրականացնելու համար, և 101,848.6 հազ. դրամը՝ նույն ծառայության դիմաց (ներառյալ՝ համատիրություններին) վճարման համար: Ծառայությունների դիմաց վճարումը նախատեսվել է փաստացի գանձվող աղբահանության վճարի 10%-ի չափով:

40. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում ծրագրով նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ՝ թվով 37 ավտոբուսներում ուղևորների և կույր հաշմանդամների համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման, կանգառները ավտոմատ հայտարարման համակարգով կահավորման համար:

41. **Աղբահանություն և սանիտարական մաքրում** ծրագրով նախատեսվել է 5,214,212.2 հազ. դրամ, որից՝ 5,194,212.2 հազ. դրամը Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ ձեռք բերելու համար, իսկ 20,000.0 հազ. դրամը ծրագրված է աղբամանների համար գրպանիկների կառուցման նպատակով:

42. **Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ** ծրագրով նախատեսվել է 352,136.5 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան ընտրված օպերատորի միջոցով սպասարկել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի աղբամուղերը (խցանման մաքրում, ախտահանում), իրականացնել աղբամուղերի աղբընդունիչների վերանորոգումը, ինչպես նաև ապահովել վարչական շրջաններում հավաքված (լքված) շինարարական աղբի բարձումն ու տեղափոխումը:

43. **Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրերով (պատվիրակված լիազորություններ)** նախատեսվել է 2,330,516.6 հազ. դրամ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է 2018 թվականին սկսել Երևան քաղաքում նոր աղբավայրի կառուցման և գործող աղբավայրի մեկուսացման գործնական աշխատանքների մեկնարկը:

44. **Գետերի հունների մաքրում** ծրագրով նախատեսվել է 38,683.0 հազ. դրամ՝ ըստ վարչական շրջաններով անցնող հատվածների՝ համապատասխան հաշվարկներով, 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

45. **Կանաչ տարածքների հիմնում և պահպանում** ծրագրով նախատեսվել է 1,669,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականին նախատեսված ցուցանիշից 8,500.0 հազ. դրամով ավելի, որից 1,609,000.0 հազ. դրամը ներառում է կանաչ տարածքների պահպանման ծառայությունները, նյութերը և ոռոգման ջրի արժեքը, ծառերի էտման ծառայությունը, 20,000.0 հազ. դրամը՝ տնկիների ձեռքբերումը, 40,000.0 հազ. դրամը՝ քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերը:

46. **Ախտահանման և միջատազերծման ծառայություններ** ծրագրով նախատեսվել է 38,075.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար և ծրագրվել է 2017 թվականի ճշտված ցուցանիշից 2,596.0 հազ. դրամով պակաս:

47. **Հասարակական գուգարանների պահպանում և վերանորոգում** ծրագրով նախատեսվել է 2,420.0 հազ. դրամ՝ պահպանման և մաքրման աշխատանքները կազմակերպելու համար:

48. **Սիզամարգերի ստեղծում և ծաղկապատում** ծրագրով նախատեսվել է 311,500.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեի չափով, ինչի շրջանակներում նախատեսվում է գազոնապատել և ծաղկապատել քաղաքի փողոցների, հրապարակների և քաղաքի մուտքերի շրջակայքը: Ընդ որում՝ նշված գումարի շրջանակներում ավելի արդյունավետ կազմակերպելու արդյունքում նախատեսվում է ձեռք բերել ծաղկասածիլներ, սիզամարգերի ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ բուսահող և կարմիր ավազ, ինչպես նաև ապահովել տեղական մշտադալար տնկիների և սածիլների ձեռքբերումը՝ դրանով իսկ էապես ավելացնելով Երևան քաղաքի սիզամարգերի ծաղկապատ և կանաչապատ մակերեսները: Որոշ նյութերի ձեռքբերմամբ և օգտագործմամբ նախատեսվում է նաև սիզամարգերի գեղարվեստական ձևավորում:

49. **Թափառող կենդանիների վնասազերծում** ծրագրով նախատեսվել է 114,602.2 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեից 397.8 հազ. դրամով պակաս՝ Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասազերծման խնդիրը կանոնակարգելու համար:

50. **Ինքնակամ կառույցների քանդում** ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ, որից 15,000.0 հազ. դրամը այն ինքնակամ կառույցների քանդման համար, որոնք հնարավոր չէ իրականացնել կառուցապատողների հաշվին, իսկ 5,000.0 հազ. դրամը՝ Երևան քաղաքում ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքների իրականացման նպատակով:

51. **Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում** ծրագրով 2018 թվականին նախատեսվում է 450,000.0 հազ. դրամ, որով չորրորդ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգության

ապահովման ծրագրի շարունակականության ապահովման շրջանակներում ծրագրվում է քանդված նախկին վթարային շենքի տարածքում սկսել նոր բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքները, որի ամբողջական ավարտը նախատեսվում է 2020 թվականի գարնանը:

52. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով նախատեսվել է 9,000.0 հազ. դրամ՝ Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի հրապարակի և Բագրատունյաց փողոցի շենքերի նեոնային լուսավորությունը վերականգնելու և պահպանելու նպատակով:

53. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 2,229,951.6 հազ. դրամ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: Ծրագիրը նախատեսված է ՀՀ 2018 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացման (սուբվենցիայի) հաշվին:

54. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի միջոցներով Ֆինանսավորվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 2,299,050.2 հազ. դրամ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է 2018 թվականին սկսել Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության ցանցի արդիականացման ծրագրի գործնական փուլը:

55. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի չափով, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի վթարայնության աստիճանի հետազոտումը և ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում կառույցների վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

56. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 395,163.6 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեի 361,025.7 հազ. դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում տանիքների նորոգման և

պահպանման աշխատանքները կազմակերպվելու են տարբեր մոտեցումներով (աշխատանքների պատվեր, նյութերի տրամադրում համատիրություններին և այլն):

57. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 1,266,216.7 հազ. դրամ՝ վարչական շրջանների կողմից ընտրված բակերի բարեկարգման, ինչպես նաև վարչական շրջաններում թվով 6 մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման համար:

58. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով նախատեսվել է ընդհանուր 920,172.4 հազ. դրամ, որից 20,000.0 հազ. դրամը նախատեսվում է շենքերի ֆասադների ընթացիկ նորոգման և մաքրման համար, 5,000.0 հազ. դրամը՝ շենքից թափվող սալերից պաշտպանիչ միջոցառումների համար, իսկ 895,172.4 հազ. դրամը՝ բազմաբնակարան շենքերի մուտքերի ամբողջական վերանորոգման, ջրթափ խողովակների փոխարինման և այլ աշխատանքների համար: Ծրագրված ցուցանիշը ավելի է 2017 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 318,522.6 հազ. դրամով:

59. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով նախատեսվել է 325,500.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և ընթացիկ նորոգման համար՝ 2017 թվականի ցուցանիշից 38,500.0 հազ. դրամով պակաս: Ծախսերի նվազեցման չափը համարժեք է 2017 թվականի Հանրապետության հրապարակի շատրվանների հիմնանորոգման վրա ծախսված գումարին:

60. Կաթսայատների պահպանում ծրագրով նախատեսվել է 24,751.6 հազ. դրամ, 2017 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից 2,030.0 հազ. դրամով պակաս և ներառում է Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների զուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը:

61. Կամարանցումների և այլ շինությունների վերանորոգում և գունազարդում ծրագրով նախատեսվել է 40,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 5,000.0 հազ. դրամով ավելի, ինչը ներառում է շենքերի դեկորատիվ գունազարդումը, քաղաքի վնասված կամարանցումների վերանորոգումը, քաղաքային մետաղյա հենասյունների վերանորոգումը և հատուկ նյութով երեսապատումը:

62. **Վթարային պատշգամբների նորոգում** ծրագրով նախատեսվել է 53,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված ցուցանիշի չափով, և ծրագրվել է նորոգել շուրջ 190 վթարային պատշգամբ:

63. **Կոյուղագծերի կառուցում և վերանորոգում** ծրագրով նախատեսվել է 4,000.0 հազ. դրամ, 2017 թվականի ճշտված ցուցանիշի չափով, Երևան քաղաքի որոշ շենքերի ներքին վթարային կոյուղագծերի և հեղեղատարների հիմնանորոգման համար:

64. **Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում** ծրագրով նախատեսվել է համայնքային կազմակերպություններին հատկացնել 70,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի բյուջեով նախատեսված 78,000.0 հազ. դրամի դիմաց՝ առաջնային օղակի առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների ձեռք բերման համար:

65. **Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 150,000.0 հազ. դրամ՝ շուրջ 15 պոլիկլինիկաների տանիքները վերանորոգելու նպատակով:

66. **Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում** ծրագրով նախատեսվել է 18,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից 6,000.0 հազ. դրամով ավելի, որի շրջանակներում նախատեսվել է սոցիալապես անապահով քաղաքացիներին կոմպյուտերային տոմոգրաֆիայի, ինչպես նաև սքրինինգային հետազոտության ծառայությունների տրամադրման համար:

67. **Աջակցություն առողջապահական կազմակերպություններին** ծրագրով նախատեսվել է 400.0 հազ. դրամ՝ ՏՄնուցում և քաղցկեղ՝ գրքույկի տպագրության և առողջապահական կազմակերպությունների միջոցով բնակչությանը տեղեկատվության տրամադրման համար:

68. **Սպորտային միջոցառումների կազմակերպում** ծրագրով նախատեսվել է 138,819.7 հազ. դրամ՝ 2017 թվականի համեմատ 29,250.0 հազ. դրամով ավելի՝ հիմք ընդունելով նախորդ տարիներին իրականացված, 2018 թվականին սպասվող միջոցառումների քանակը՝ ներառյալ նաև Համահայկական ձմեռային խաղերը:

69. **Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում** ծրագրով նախատեսվել է 590,800.0 հազ. դրամ, որից՝ 40,000.0 հազ. դրամը՝ Սիրահարների զբոսայգու պահպանման, 425,300.0 հազ. դրամը՝ Ծարավ Աղբյուրի և

Պանթեոնին հարակից զբոսայգիների վերականգնման, 80,000.0 հազ. դրամը՝ Էրեբունի վարչական շրջանում զբոսայգու հիմնանորոգման, 40,000.0 հազ. դրամը Նոր Նորք վարչական շրջան հանգստի գոտու կառուցման համար:

70. Հեծանվահրապարակի շահագործում ծրագրով նախատեսվել է 60,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեից 2,000.0 հազ. դրամով պակաս՝ հեծանվահրապարակի վերանորոգման և գործունեության ապահովման համար:

71. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 455,210.6 հազ. դրամ՝ Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար:

72. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով նախատեսվել է 266,213.1 հազ. դրամ, որից Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար ՀՀ 2018 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների մասով 243,302.4 հազ. դրամ, իսկ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ կետով համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար վճարները որպես տեղական վճարների տեսակ սահմանելու հանգամանքով պայմանավորված թվով 3 թանգարաններին մուտքի վճարների փոխհատուցման համար՝ 13,868.9 հազ. դրամ: «Ֆ. Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի պահպանման համար նախատեսվել է 9041.8 հազ. դրամ:

73. Թանգարանների նորոգում ծրագրով նախատեսվում է 17,250.0 հազ. դրամ՝ Էրեբունի հնավայրի պահպանման, պատմամշակութային բաղադրիչի արժևորման, զբոսաշրջության խթանման և այդ համատեքստում մատուցվող ծառայությունների ընդլայնման նպատակով շինարարական աշխատանքների իրականացման համար:

74. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 380,384.5 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների պահպանման նպատակով:

75. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 1,057,755.7 հազ. դրամ՝ 2017 թվականի բյուջեից 317,650.0 հազ. դրամով ավելի, ինչը ներառում է Երևանի 2800 ամյակի հորեյլանական միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև տարվա ընթացքում Երևանի քաղաքապետարանի և վարչական

շրջանների կողմից Երևան քաղաքում իրականացվող բոլոր միջոցառումները, որոնք հաշվարկվել են համանման միջոցառումների կազմակերպման ծախսերից ելնելով:

76. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով նախատեսվել է 252,007.7 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի սուբսիդավորման համար՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

77. Կենդանաբանական այգու հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեից 605,015.5 հազ. դրամով պակաս: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել Կենդանաբանական այգու զարգացման, վերանորոգման և արդիականացման աշխատանքները:

78. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով նախատեսվել է 112,586.1 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի 111,651.3 հազ. դրամի դիմաց՝ Երևանի ենթակայության «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա», «Մարաթուկ» մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ների և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ-ի սուբսիդավորման համար:

79. Թատերական ներկայացումներ ծրագրով նախատեսվել է 363,250.1 հազ. դրամ Երևանի ենթակայության թվով 3 թատրոնների սուբսիդավորման համար ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

80. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 14,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշի չափով՝ հուշարձանների վնասման և այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

81. Քաղաքապետարանի աշխատանքների լուսաբանում ծրագրով նախատեսվել է 56,000.0 հազ. դրամ, որն ուղղվելու է մայրաքաղաքային առօրյա կյանքի, բնակչությանը հուզող խնդիրների, դրանց լուծման ուղիների, քաղաքի ապագային միտված նախաձեռնությունների և զարգացման նպատակային ծրագրերի հեռուստատեսային լուսաբանմանը:

82. Անդամակցության վճարներ ծրագրով նախատեսվել է 31,325.0 հազ. դրամ՝ Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի,

Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի, Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության, Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի, Հայաստանի համայնքների միության և Հայաստանի ավագանիների ասոցիացիայի անդամակցության վճարները վճարելու համար:

83. Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվել է 7,797,426.8 հազ. դրամ 2017 թվականի հաստատված բյուջեի 7,714,614.8 հազ. դրամի դիմաց կամ 82,812.0 հազ. դրամով ավելի: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրվել է 2017 թվականի չափով՝ 22.5 հազ. դրամ, ինչպես նաև յուրաքանչյուր ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար ամսական 650,0 հազ. դրամ, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով 2017 թվականին երեխաների փաստացի միջին թիվը՝ որոշակի աճի հնարավորությամբ:

84. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 200,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեից 40,000.0 հազ. դրամով պակաս, ինչի շրջանակներում նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզների համար ձեռք բերել մանկական կահույք՝ մահճակալ, պահարան, սեղան, աթոռ և կենցաղային էեկտրական սարքավորումներ՝ գազօջախ, սառնարան, մսաղաց և այլն: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

85. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 8,634.6 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների հիման վրա:

86. Հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ներառական կրթություն և երեկոյան ուսուցում ծրագրերով նախատեսվել է 15,953,414.9 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

87. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 3,269,283.7 հազ. դրամ, ինչը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության

երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորումը: Նշված ծրագիրը ներառում է նաև թվով 2 սպորտդպրոցների պահպանման ծախսերը, որոնք նախատեսվել են ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին՝ 62,595.8 հազ. դրամի չափով: Ծրագրով նախատեսված գումարի էական աճը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով արտադպրոցական դաստիարակության հաստատությունների՝ տվյալ պարագայում երաժշտական և արվեստի դպրոցների կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների կողմից կատարված վճարները՝ որպես տեղական վճար սահմանելու հանգամանքով:

88. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 58,900 հազ. դրամ՝ Էրեբունի վարչական շրջանի «Թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգման նպատակով:

89. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 7,547.8 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

90. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսվել է 142,358.7 հազ. դրամ՝ որպես սուբսիդիա՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

91. Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականին նախատեսվածից 10,000.0 հազ. դրամով ավել, որից՝ 50,000.0 հազ. դրամը Երևանի ենթակայության երաժշտական դպրոցների համար գույքի և երաժշտական գործիքների ձեռք բերման համար, 50,000.0 հազ. դրամը՝ շախմատի դպրոցների համար գույքի և մարզական կազմակերպությունների համար մարզագույքի ձեռք բերման համար:

92. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 1,102,000.3 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 550,000.0 հազ. դրամով ավելի: Նախատեսվում է

վարչական շրջաններում իրականացնել թվով 39 նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում, իսկ 2,000.3 հազ. դրամի շրջանակներում՝ մանկապարտեզների ընթացիկ նորոգում: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական լուծումը:

93. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 27,200.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված ցուցանիշից 6,000.0 հազ. դրամով ավելի, որի շրջանակներում նախատեսվում են մարզական խաղերի կազմակերպում, մանկավարժների խրախուսման միջոցառումների անցկացում, «Ազգային Ժողովի գավաթի» կազմակերպում, առարկայական օլիմպիադաներ, շախմատի օլիմպիադա, հոբելյանական միջոցառումներ, այցելություններ քույր քաղաքներ և համագործակցություն ներառական կրթություն իրականացնող դպրոցներին աջակցող թիմերի հետ:

94. Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 818.1 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

95. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 28,243.0 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

96. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 6,427.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված ցուցանիշից 80.0 հազ. դրամով պակաս և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

97. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 31,603.5 հազ. դրամ՝ 2017 թվականի 30,973.5 հազ. դրամի դիմաց և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

98. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն, և հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրերով նախատեսվել է

659,387.5 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 9,277.5 հազ. դրամով ավելի և հաշվարկված է հստակ ծրագրային մոտեցումներից, բնակչության առանձնացված խմբերի աջակցության միջոցառումներից ելնելով:

99. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 363,719.6 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

100. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվում է 692,496.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

101. Առողջության ապահովագրություն ծրագրով նախատեսվել է 419,224.0 հազ. դրամ, 2017 թվականի ցուցանիշից 269,340.5 հազ. դրամով ավելի: Ծրագրի համար նախատեսված գումարի ավելացումը պայմանավորված է առողջության ապահովագրություն ստացող անձանց ցանկում շախմատի դպրոցների և մանկապարտեզների աշխատակիցների ընդգրկմամբ: Առողջության ապահովագրության ծառայություններ են ձեռք բերվում նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, «Երևանտրանս» ՓԲԸ-ի վարորդների, «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի սպասարկող անձնակազմի, ինչպես նաև Երևան քաղաքի թատրոնների և թանգարանների, գրադարանների համար: Առողջության ապահովագրության փաթեթի սահմանաչափը (գումարը), յուրաքանչյուր աշխատակցի համար նախատեսվում է 52.0 հազ. դրամ, ինչը ապահովագրություն ստացող անձի պարագայում տարվա կտրվածքով նախատեսում է մինչև 4 000 000 դրամի առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն: Առողջության ապահովագրության փաթեթի մեջ մտնող ծառայությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1691-Ն որոշման N 2 հավելվածի N 1.1 ձևում սահմանված և հաստատված առողջության ապահովագրության բազային փաթեթի չափորոշիչներին:

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 48,000.0 հազ. դրամի չափով պակասուրդ: Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվում է 400,000.0 հազ. դրամի չափով, որից 340,000.0 հազ. դրամը կուղղվի ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա Երևան համայնքի կողմից 100% բաժնեմասը որպես նվիրատվություն ձեռք բերած «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու միջոցով ակտիվների ձեռք բերման համար ՓԲԸ-ի վերցված փոխառությունները համաձայն ժամանակացույցի մարելու պարտավորությունների կատարմանը: Տարեսկզբի ազատ մնացորդից 12,000.0 հազ. դրամն ուղղվելու է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը:

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2017 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագիծը՝ հաստատված ժամանակացույցի համաձայն, 2018 թվականի նոյեմբերի 6-ին ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամներին: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը 2017 թվականի նոյեմբերի 8-ին հրավիրված նիստում տվել է իր դրական եզրակացությունը 2017 թվականի նոյեմբերի 8-ից մինչև նոյեմբերի 23-ը Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու համար: Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական <http://www.e-draft.am> կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական կայքում հրապարակվել է Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծի էլեկտրոնային տարբերակը կից բացատրագիր-հիմնավորմամբ: 2017 թվականի նոյեմբերի 23-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծի հանրային քննարկում՝ հանրային բաց

խումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթերթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 24-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման արդյունքները: Նույն նիստում Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը տվել է իր դրական եզրակացությունը Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելու համար:

Այսպիսով, Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *Եկամուտների գծով՝ 80,189,969.8 հազ. դրամ,*
2. *ծախսերի գծով՝ 80,237,969.8 հազ. դրամ,*
3. *դեֆիցիտը՝ 48,000.0 հազ. դրամ:*

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՑԱՆԿ

ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ)
Ըստ Երևան համայնքի բյուջեի ծրագրերի

հազար դրամներով

N	Ծրագրի անվանումը	Գումարը
	ԸՆԹԱՑԻՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ	8,265,691.2
1	Կառավարման մարմնի պահպանում	1,073,363.0
2	Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում	3,284,000.0
3	Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն	602,201.9
4	Երևան քաղաքի ենթակայության կազմակերպություններում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում	12,660.0
5	Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ	2,229,951.6
6	Թանգարային ծառայություններ և ցուցահանդեսներ	243,302.4
7	Կենդանաբանական այգու ցուցադրություններ	252,007.7
8	Թատերական ներկայացումներ	363,250.1
9	Արտադպրոցական դաստիարակություն	62,595.8
10	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում	142,358.7

ՑԱՆԿ

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ
 ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 Ըստ Երևան համայնքի բյուջեի ծրագրերի

հազար դրամներով

N	Ծրագրի անվանումը	Գումարը
	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	36,590,543.6
1	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում	92,843.1
2	Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր	2,994,279.9
3	Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր	5,684,507.1
4	Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում	2,724,280.6
5	Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր	364,413.7
6	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր	1,148,664.0
7	Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր	1,897,114.4
8	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագիր	367,678.7
9	Վերակառուցման և զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր	255,482.0
10	Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի միջոցներով ֆինանսավորվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր	819,571.8
11	Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր	565,477.7
12	Վերակառուցման և զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագիր	322,306.4
13	Վերակառուցման և զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագիր	654,354.7
14	Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր	1,260,658.8
15	Վերակառուցման և զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր	384,036.7
16	Նախադպրոցական կրթություն	8,634.6
17	Հանրակրթական ուսուցում	5,948,569.0
18	Հատուկ կրթություն	143,196.9
19	Ներառական կրթություն	511,407.9
20	Հանրակրթական ուսուցում	8,105,013.1
21	Հատուկ կրթություն	225,643.7
22	Ներառական կրթություն	788,940.2
23	Հանրակրթական ուսուցում	195,150.1
24	Հատուկ կրթություն	34,714.4
25	Ներառական կրթություն	779.6
26	«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում	7,547.8
27	Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովում	818.1
28	Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	28,243.0
29	Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում	363,719.6
30	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	692,496.0

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԼԱՍԱԳՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՅ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱԿԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<p>Հ/Հ</p> <p>Առաջարկության, առարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը</p>	<p>Առաջարկության և/կամ առարկության բովանդակությունը</p>	<p>Եզրակացություն</p>	<p>Կատարված փոփոխությունը</p>
<p>1</p>	<p>2</p>	<p>3</p>	<p>4</p>
<p>1. Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամ Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ</p> <p>Անահիտ Բախշյան</p> <p>(հ.Ե-3/93 գրություն՝ առ 15.11.2017թ.)</p>	<p>«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման /18 փետրվարի 2016 թվականի N 6/ համաձայն Երևանի ենթակայության դպրոցներում համընդհանուր ներառական քաղաքականության ֆինանսավորումն իրականացնելու համար Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների համաձայն 2018թ. բյուջեում «Ներառական կրթություն» տողով հատկացված է 1.301.127.700դրամ: Համընդհանուր ներառական քաղաքականության ֆինանսավորման առաջին պահանջը դպրոցներում ուսուցչի օգնականի հաստիքների ֆինանսավորումն է: Ըստ ԿՏԱԿ-ի կայքի 2016-2017թ.թ ուստարում Երևանի բոլոր դպրոցների աշակերտների թիվը 112000-ի կարգի է և այս աշակերտների թվից ելնելով, համապատասխան բանաձևով հաշվելով, նրանց թիվը 750-ի կարգի է, որոնց աշխատավարձը ուսուցչական դրույքի 86տոկոսն է ու ուսուցչի</p>	<p>Առաջարկն ընդունվել է, սակայն «Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:</p> <p>Երևանի ենթակայության դպրոցներին հատկացվող գումարներն՝ ըստ ծրագրերի, այդ թվում՝ ներառական կրթության համար, նախատեսվում են յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեով՝ որպես պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորում, որն էլ նույնությամբ արտացոլվում է Երևան քաղաքի բյուջեում:</p>	

		<p>օգնականների աշխատավարձը Երևանում կկազմի 1.085 մլդ դրամ, որի համար ակնհայտորեն բավարար է 2018-ին ներառական կրթության համար պատվիրակված գումարը, ավելին այդ գումարի մոտ 200 մլն մնացորդով պետք է ապահովվի բոլոր դպրոցներում երեխաների կրթական կարիքը բացահայտելուն օգնող մասնագետների առկայությունը:</p>		
2.		<p>Մանկապարտեզներում ավելացնել մսուրային խմբերի առակայությունը:</p>	<p>Առաջարկն ընդունվել է և ի սկզբանե նախատեսված է եղել բյուջեով, հետևաբար նախագծում փոփոխություն չի կատարվել:</p> <p>«Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով նախորդ տարվա համեմատ նախատեսվել է մսուրային խմբերի որոշակի աճ: Միաժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ մանկապարտեզներում ինչպես մսուրային, այնպես էլ մնացած խմբերի ավելացումները նախատեսվում և իրականացվում են համայնքի առկա հնարավորությունների շրջանակում:</p>	
3.		<p>Կարգի բերել «Օղակաձև» գրոսայգու ամբողջ տարածքը, ավելացնել կանաչ տարածքներն ու թարմացնել ռոռզման ցանցը: (3-րդ անգամ)</p>	<p>Առաջարկն ընդունվել է, սակայն նախագծում փոփոխություն չի կատարվել:</p> <p>2017թ. «Օղակաձև» գրոսայգու բոլոր հատվածներում իրականացվել է գույքագրման, չափագրման, քարտեզագրման, վարձակալության օրված տարածքների սահմանների</p>	

			<p>վերաճշտման համալիր աշխատանքներ: Միաժամանակ ազարտական փուլում է վարձակալների հետ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված վարձավճարներով պայմանագրերի վերակնքման գործընթացը:</p> <p>2017 թվականին Օդակաձև գրասպաս 5-րդ հատվածից /սահմանափակված Վարդանանց - Սայաթ-նովա փողոցներով/ դեպի 4-րդ հատված /Սայաթ-նովա - Ալ. Մանուկյան փողոցներ/ անց է կացվել նոր ոռոգման ցանց, որը կարգավորել է տվյալ հատվածի ոռոգման խնդիրը: 2018 թվականին նախատեսված է իրականացնել Մուսկոյան փողոցի ոռոգման ցանցի ստեղծումը, որի անուցման արբուրից մեկը գտնվում է Կամերային թատրոնի տարածքին կից /Օդակաձև գրասպաս 3-րդ հատված/: Նախատեսվում է գոյություն ունեցող խորքային պոմպը վերափոխել ավելի հզոր պոմպով, որն իր հերթին կլուծի նաև Օդակաձև գրասպաս 3-րդ հատվածի ոռոգման խնդիրը: Նշված աշխատանքների շնորհիվ, որոնք կրելու են շարունակական բնույթ, հնարավոր կլինի հետագայում բարելավել և ընդարձակել գրասպասու կանաչ մակերեսը:</p>
4.		<p>Վերականգնել Հաղթանակ գրասպասու տարածքի անտառը: (3-րդ անգամ)</p>	<p>Առաջարկն ընդունվել է, սակայն նախագծում փոփոխություն չի կատարվել:</p>


			<p>Հարթանակ գբուսացու տարածքի վերականգնման ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում:</p> <p>Հարթանակ գբուսացու տարածքում կատարվել է ոռոգման ցանցի և սրմուկակայանի ստեղծման աշխատանքներ, որի առկայությամբ զգալիորեն բարելավվել է ոռոգման ջրի մատակարարումը:</p>	
5.		<p>Կենտրոնի թ. 39 դպրոցի բակը, որտեղ շարված են մի բանի փոքր տներ՝ իրենց կենցարային խճանկարով դպրոցի հետ անհամատեղելի, համապատասխանեցնել կրթական օջախին, դպրոցը չունի ոչ սպորտային դահլիճ, ոչ սպորտ հրապարակ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է, սակայն հաշվի առնելով, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն չի նշվել առաջարկի ֆինանսական միջոցների աղբյուրները և չի տրվել աշխատանքների ֆինանսական գնահատականը, այն չի ընդգրկվել Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծում:</p>	
6.		<p>Վերացնել Շենգավիթի թ.50 դպրոցի ցանկապատին կցած «Սառնա», «Խուրանոց», «Լյուքս» անհայտ ու ոչ պարկեշտ գործունեություն ենթադրող սրահները:</p>	<p>Առաջարկն ընդունվել է, սակայն հաշվի առնելով, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն չի նշվել առաջարկի ֆինանսական միջոցների աղբյուրները և չի տրվել աշխատանքների ֆինանսական գնահատականը, այն չի ընդգրկվել Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծում:</p>	
7.		<p>Վերացնել Կենտրոնի թ.24 դպրոցի բակի ավտոտնակները, որոնք խոչընդոտում են դպրոցի ելքն ու մուտքը:</p>	<p>Առաջարկն ընդունվել է, սակայն հաշվի առնելով, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ</p>	

		<p>օրենքի 55-րդ հոդվածի համաձայն չի նշվել արաջարկի ֆինանսական միջոցների աղբյուրները և չի տրվել աշխատանքների ֆինանսական գնահատականը, այն չի ընդգրկվել Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծում:</p>	
8.	<p>Լուծել Խաչատուր Աբովյանի տուն թանգարանի տարածքի ոռոգման խնդիրը: (2-րդ անգամ):</p>	<p>Արաջարկն ընդունվել է, սակայն հաշվի առնելով, որ «Տերական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն չի նշվել արաջարկի ֆինանսական միջոցների աղբյուրները և չի տրվել աշխատանքների ֆինանսական գնահատականը, այն չի ընդգրկվել Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծում:</p>	
9.	<p>Հ/Ա թաղամասի հ.73, 75 շենքի ամբողջությամբ բնագավթել են ավտոտնակները: Արաջարկում են դրանց տերերի հետ համագործակցել, նրանց ներդրավել այդ տանիքների վրա երեխաների համար խաղարկաշտ սարքերու համար: Ունեն նրանց դիմումները:</p>	<p>Արաջարկն ընդունվել է, սակայն հաշվի առնելով, որ «Տերական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն չի նշվել արաջարկի ֆինանսական միջոցների աղբյուրները և չի տրվել աշխատանքների ֆինանսական գնահատականը, այն չի ընդգրկվել Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծում:</p>	
10.	<p>Ֆինանսավորել Yerevan.am կայքում youtoobi պատուհան, որտեղ դրված լինեն ավագանու նիստերի արցանց տեսագրությունները:</p>	<p>Արաջարկն ընդունվել է, սակայն նախագծում փոփոխություն չի կատարվել, քանի որ արաջարկում նշված youtoob պատուհանն այդպես չի գործում է:</p>	
11.	<p>Նախատեսել Երևանի էնթալպայության թ.18, 20, և 79 մանկապարտեզների վերանորոգման համար ֆինանսավորում, որը 14.03.2017թ. 04/05-</p>	<p>Արաջարկն ընդունվել է մասնակի, սակայն նախագծում փոփոխություն չի կատարվել:</p>	

	<p>12655h,12656,12658h գրություններում խոստացել են փոխարարապետեր պարոն Նիկոլայան ու պարոն Սուքիասյանը, ինչպես նաև վարչական շրջանների ղեկավարները: Մասնավորապես թ. 79 մանկապարտեզ. տանիքի մասնակի վերանորոգում, բակի և շրջակա տարածքի, տարակարների, բակային խաղերի և ոռոգման ցանցի բարեկարգում, խմբանկյակների ջրատար խողովակների և սանհանգույցների վերանորոգում, գուլքի ձեռք բերում: Թիվ 20 մանկապարտեզ. կարիք ունի նկուղի վերանորոգման, վերջինս կարող է ծառայել որպես երաժշտական և սպորտային դահլիճ, ինչից գուրկ է մանկապարտեզը: Մանկապարտեզը կարիք ունի նորոգման: Թիվ 18 մանկապարտեզ. կարիք ունի կապիտալ վերանորոգման:</p> <p>Թիվ 162 մակապարտեզ. ունի ոռոգման համակարգի կարիք:</p>	<p>Մանկապարտեզների հիմնանորոգումը հանդիսանում է գերակա խնդիր և Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է երկու անգամ ավել գումար նախորդ տարվա համեմատ: Նշված գումարի շրջանակներում հիմնանորոգվելիք մանկապարտեզների ընտրությունը կատարվում է ըստ անհրաժեշտության և հրատապության: Միաժամանակ Երևանի քաղաքապետարանը բանակցություններ է վարում Եվրոպական ներդրումային բանկի հետ մանկապարտեզների շենքերի ջերմամեկուսացման ծրագիր իրականացնելու նպատակով, որի շրջանակում համայնքի համաձայնաստվորմամբ կիրականացվեն նաև մյուս հատվածների հիմնանորոգման աշխատանքները:</p>	
<p>12. Երևանի ավագանու «Ելք» խմբակցության ղեկավար Պավլիթ Խաժուկյան (2/Ե-49 գրություն՝ առ 22.11.2017թ.)</p>	<p>Մոլորվական 29/1 և 29/2, ինչպես նաև 12/1 հանրակացարանային մասնաշենքերի բարեկարգման աշխատանքները 2018թ. բյուջեում ներառելու մասին</p>	<p>Առաջարկն ընդունվել է, սակայն նախագծում փոփոխություն չի կատարվել: Երևան քաղաքի բյուջեի կառուցվածքում որևէ բազմաբնակարան հանրակացարանային առանձին շենքի ընդհանուր բարեկարգման ծրագիր նախատեսված չէ: Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծում առկա են բազմաբնակարան շենքերի մուտքերի, տանիքների, ֆասադների, պատշգամբների վերանորոգման</p>	

			<p>ծրագրեր, որոնցում նախատեսված միջոցներով ստարվա ընթացքում կրականագլիկու էն վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքները ըստ դրանց հրատարակության աստիճանի և առաջնահերթության:</p>	
--	--	--	--	--

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 224-Ն և 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 90-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 190-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 675-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՅ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<p>Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկում</p>	<p>«Երևան համայնքում տեղական տուրքերի 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին», «Երևան համայնքում տեղական վճարների 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի N 224-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 90-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին», «2018 թվականի տեղական վճարի գծով արտոնություններ սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի N 190-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2017 թվականի փետրվարի 14-ի N 675-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի հաստատման մասին», «Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) վերաբերյալ հանրային քննարկումների հրավերները</p> <p>ա. հրապարակվել են 08.11.2017թ. Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում,</p> <p>բ. հրապարակվել են 08.11.2017թ. իրավական ակտերի նախագծերի միասնական հրապարակման կայքում (www.e-draft.am),</p> <p>գ. հրապարակվել են 09.11.2017թ. «Հայոց աշխարհ» օրաթերթում,</p> <p>դ. փակցվել են Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:</p>
<p>Հանրային քննարկումների մասնակիցները</p>	<p>Հանրային քննարկումների հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝</p> <p>ա. Նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներին առաջարկություններով և առարկություններով մասնակցել են հետևյալ անձինք՝</p> <p>1. Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամ, Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ՝ Անահիտ Բախշյան (հ.Ե-3/92 և</p>

	<p>հ.Ե-3/93 գրություններ՝ առ 15.11.2017թ.),</p> <ol style="list-style-type: none"> 2. Մերի Խաչատրյան (հ.Խ-2663 գրություն՝ առ 21.11.2017թ.), 3. Արսեն Գրիգորյան (ստացված է իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 10.11.2017թ.), 4. «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ՝ Մովսես Արիստակեսյան (ստացված է իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 09.11.2017թ.), 5. «Դիսքրիմինի ինֆո» հասարակական կազմակերպություն (ստացված է իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 14.11.2017թ.), 6. Երևանի ավագանու «Ելք» խմբակցության ղեկավար՝ Դավիթ Խաժակյան (հ.2/Ե-49 գրություն՝ առ 22.11.2017թ.), 7. Արամ Գրիգորյան (հանրային լուսմներ 23.11.2017թ., դիմում հ.Գ-5231 առ 15.11.2017թ.), 8. Մերի Խաչատրյան (հանրային լուսմներ 23.11.2017թ., դիմում հ. Խ-2663 հ.Գ-5231 առ 21.11.2017թ.) <p>բ. հանրային բաց լուսմների եղանակով 12.10.2017թ. ժ.15:00-ին կազմակերպված հանրային քննարկումներին մասնակցելու համար դիմումներ են ներկայացրել հետևյալ անձիք՝</p> <ol style="list-style-type: none"> 1. «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ՝ Մովսես Արիստակեսյան (20.11.2017թ., գրություն հ.17/75028), 2. Արամ Գրիգորյան (15.11.2017թ., գրություն հ.Գ-5231 դիմում), 3. Մերի Խաչատրյան (21.11.2017թ., գրություն հ. Խ-2663):
<p>Հանրային քննարկումների մասնակցության արդյունքները</p>	<p>Հանրային քննարկումների հրավերներով սահմանված կարգով և ժամկետում նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների արդյունքում Նախագծերում կատարված համապատասխան փոփոխությունները ներկայացվել են սահմանված կարգով կազմված ամփոփաթերթերում:</p>
<p>Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք կան)</p>	<p>Հանրային բաց լուսմների եղանակով կազմակերպված հանրային քննարկումների ընթացքում Նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, առարկությունների և հարցադրումների ընդունման կամ չընդունման վերաբերյալ կազմվել են տեղեկանքներ:</p>

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ